Հովհաննես Շիրազ

Մարգարիտն ու փրփուրը

Ծովի երեսն է փրփուրը ելնում,
Փայլփլում մի պահ, իբր մարգարիտ,
Մինչ մարգարիտը խորքում է լինում,
Խորից է ծնվում գանձը ճշմարիտ:

Բայց այսպես խոսեց փրփուրն այդ մասին.
- Ինչո՞ւ տեղ չունես ծովի երեսին,
Թե մարգարիտ ես... Էլ ի՞նչ մարգարիտ,
Ես եմ մայր ծովի գանձը ճշմարիտ,
Որ միշտ ջրերի երեսն եմ ելնում,
ՈՒ ես եմ փայլում,
Կյանքը վայելում....

Բայց իր վայելքը երկար չտևեց,
Մի քամի ելավ, փրփուրը ցրվեց,
Հետքն էլ չմնաց ծովի երեսին...
Մինչ մարգարիտը, երբ խորքից հանվեց,
Ձեռքե-ձեռք խլվեց, գանձ է, գանձ, ասին,
Ահա մայր ծովի միակ փառքը մեծ:
...Մարդիկ կան, որոնք փրփուրի նման
Միշտ կյանքի ծովի երեսն են ելնում,
Բայց խորքում որքա՛ն
Մարգարիտներ կան,

Որոնց փառքը դեռ փրփուրն է խլում: